Կարեն Գրիգորյան, *պ.գ.թ., դոցենտ*
ՀՊՏՀ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հիմնաբառեր – կրթություն, մարդկային ներուժ, կայուն տնտեսական զարգացում, ինդեքս, ենթաինդեքսներ, որակի ապահովում

Ներածություն: ՀՀ կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն տնտեսական զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Ուստի, այս ոլորտի զարգացումը ներկայում երկրի տնտեսական զարգացման առաջնային գերակայություններից է:

Հարկ է ընդգծել, որ տնտեսական զարգացման ռազմավարական ելակետը գիտելիքի ստեղծումն է, յուրացումն ու արդյունավետ կիրառումը: Պետական քաղաքականության արդյունավետ իրականացումը հանգում է գիտական ներուժի նպատակային վերարտադրությանը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի կազմակերպմանը: Արդիական տեխնոլոգիաների ներդրման ընդլայնումը պետք է հիմնվի մարդկային կապիտալի զարգացման վրա՝ որպես նոր որակի մրցակցության և ձեռներեցության առանցք:

Միևնույն ժամանակ պետք է շեշտել, որ գործընթացի կարևորագույն ելքը բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցումն ու ստեղծվող նոր արժեքի մեջ մարդկային գործոնի դերի մեծացումն է, բարձր մասնագիտացված ու տեխնոլոգիատար վերջնական արդյունքների թողարկման ու արտահանման ծավալների ընդլայնումը:

Ինչպես հայտնի է, «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» չափում է երկրի՝ մարդկային ներուժի զարգացման միջին առաջընթացը: Այլ խոսքով, ինդեքսը ներկայացնում է մարդկային զարգացման հետևյալ երեք հարթությունների բաղադրյալ գնահատականը. ապրել երկար և առողջ կյանքով (չափվում է կյանքի տևողությամբ), լինել կրթված (չափվում է գրագիտությամբ) և ունենալ արժանավայել կենսամակարդակ (չափվում է գնողունակության համարժեքությամբ, եկամտի մակարդակով):[1] Փաստորեն մարդկային ներուժի զարգաց-

[1] Աղբյուրը՝ Միացյալ ազգերի կազմակերպության, Մարդկային ներուժի զարգացման 2013 թ. ինդեքս, 2014 Human Development Report, Sustaining Human

ման ինդեքսը երեք առանձին ենթաինդեքսների ամփոփ գնահատականն է: Դրանք են՝ կյանքի տևողության, կրթության և համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) ենթաինդեքսները:

Ուշագրավ է այն, որ կրթության ինդեքսի գնահատման ժամանակ նախկինում կիրառվող չափահասների գրագիտության ցուցանիշը փոխարինվել է չափահասների ուսման միջին տարիների ցուցանիշով, որը 25 տարեկանից բարձր չափահասների սովորած տարիների միջինն է (ներառում է դպրոցում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու տարիները): Բացի այդ, կրթության ինդեքսում նախկինում կիրառվող մյուս՝ համախառն (դպրոցական, բակալավրիատի, մագիստրատուրայի և ավելի բարձր մակարդակի) գրագիտության ցուցանիշը փոխարինվել է ուսման սպասվող տարիների ցուցանիշով, որն արտացոլում է այն տարիների թիվը, որն անցնելով դպրոցական տարիքի հասած երեխան կունենա ԲՈՒՀ ընդունվելու համար անհրաժեշտ գրագիտության մակարդակ: Երկրում չափահասների ուսման տարիների ցուցանիշի աղբյուր են ծառայել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի տվյալները:

Մատնանշենք, որ 2013թ. կրթության ենթաինդեքսը գնահատելիս հաշվարկվել են երկու առանձին ցուցանիշներ՝ չափահասների ուսման միջին տարիները և դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիները: Առաջինը, չափահասների ուսման միջին տարիների գնահատականը հաշվարկվել է (Vi-Vmin)/(Vmax-Vmin) բանաձևով, որտեղ Vi-ը տվյալ երկրի դպրոցներում և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու տարիների միջինն է: Vmax-ը սահմանված է 15.0 տարի, իսկ Vmin-ը սահմանված է 0 տարի: Երկրորդը՝ դպրոցական տարիքի երեխաների ուսման սպասվող տարիների գնահատականը հաշվարկվել է նույն բանաձևով: Vmax-ը սահմանված է 18.0 տարի, որը համարժեք է մագիստրոսի կոչում ձեռք բերելու համար անհրաժեշտ ուսման տարիներին, իսկ Vmin-ը սահմանված է 0 տարի: Վերոնշյալ երկու ցուցանիշների միջինացված գնահատականի հիման վրա հաշվարկվում է կրթության ենթաինդեքսը:[2]

Progress: Reducing Vulnerabilities and Building Resilience, UN, 2014. http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf:

[2] Աղբյուրը՝ Միացյալ ազգերի կազմակերպության, Մարդկային ներուժի զարգացման 2013 թ. ինդեքս, 2014 Human Development Report, Sustaining Human Progress: Reducing Vulnerabilities and Building Resilience, UN, 2014. http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf:

Հարկ է նշել, որ վերջում, «Կյանքի տևողության», «Կրթության» և «ՀԱԵ»-ի ենթաինդեքսների միջին երկրաչափականի հիման վրա (նախորդ տարիներին օգտագործում էին նշված ենթաինդեքսների միջին թվաբանականը) գնահատվում է երկրի ամփոփ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը»:[3]

Նկատենք, որ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2013»-ում երկրները, ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի, դասակարգվել են «շատ բարձր» (1.0-ից մինչև 0.800), «բարձր» (0.799-ից մինչև 0.700), «միջին» (0.699-ից մինչև 0.550) և «ցածր» (0.549 և ցածր) մակարդակ ունեցող երկրների: Ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի՝ Հայաստանը ներկայում դասվում է մարդկային ներուժի զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկրների թվին և զբաղեցնում է 87-րդ տեղը աշխարհի 187 երկրների թվում: Ինչ վերաբերում է այս ինդեքսի հիմքում ընկած առանձին ենթաինդեքսներին, ապա, նկատենք, որ կյանքի տևողության 2013 թ. Ենթաինդեքսը Հայաստանում կազմել է 0.840, կրթության ենթաինդեքսը՝ 0.702 և ՀԱԵ ենթաինդեքսը՝ 0.661:[4]

Ինչպես ցույց է տալիս ՀՀ «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան, 1990-2013 թթ. ընթացքում ՀՀ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» աճել է 15.5%-ով կամ յուրաքանչյուր տարի միջին հաշվով աճել է 0.63%-ով՝ 0.632-ից հասնելով 0.730-ի: 1980-2013թթ. ընթացքում կյանքի միջին տևողությունն ավելացել է շուրջ 3.7 տարով, ուսման միջին տևողությունն ավելացել է 1.6 տարով: 1990-2013թթ. ընթացքում մեկ շնչի հաշվով եկամուտն ավելացել է 122.1%-ով:

Իսկ հարավկովկասյան տարածաշրջանային համապատկերում Հայաստանը մարդկային ներուժի զարգացման մակարդակով 2013թ.-ին զիջում է իր հարևան երկու երկրներին: Այդ ցուցակում Վրաստանը 79-րդ տեղում է, իսկ Ադրբեջանը՝ 76-րդ:[5]

Ավելացնենք, որ Հայաստանի մասնագիտական կրթությունը վերջին քսան տարվա ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել: Մեծ թվով օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի ընդունումը փոխել է կրթական համակարգի վարչարարությունը: Սակայն էական փոփոխությունները դեռևս առջևում են:

Այսպիսով, ՀՀ մասնագիտական կրթությունը ընդհանուր առմամբ բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

---

[3] Տես՝ http://hdr.undp.org/sites/default/files/hdr14_technical_notes.pdf:

[4] Տես՝ http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf:

[5] Աղբյուրը՝ http://hdr.undp.org/sites/default/files/hdr14-report-en-1.pdf:

- որպես մշակութային արժեք, որը բարձրացնում է մասնագիտական կրթության պահանջարկը,
- մոտավորապես 3 միլիոն բնակչություն ունեցող պետության համար ԲՈՒՀ-երի չափազանց մեծ քանակով,
- ինստիտուցիոնալ կառավարման և պլանավորման խնդիրներով,
- միջազգային միտումների ոչ համարժեք մեկնաբանությամբ և
- գիտության և աշխատաշուկայի միջև թույլ կապերով:

Այդուհանդերձ, փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը առաջնահերթ է դարձնում հաշվետվողականության, որակի ապահովման և, հետևաբար, որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ արվող քայլերը, որպեսզի մասնագիտական ուսումնական հաստատություններում կատարվող փոփոխությունները լինեն արդյունավետ:

Բացի այդ, համակարգի վերականգնման նպատակով որակի ապահովումը պետք է ուղղված լինի բարելավմանը, և այն պետք է դիտվի որպես բարեփոխում՝ կազմակերպչական մակարդակում փոփոխություններ իրականացնելու նպատակով, ինչը կհանգեցնի սովորող մշակույթի ձևավորմանը, որը շատ կարևոր է գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար:[6]

Եզրակացություն: Ժամանակակից պայմաններում անցումը դեպի կրթության արդյունահենք մոդել կարող է հնարավոր դառնալ միայն գլոբալ կրթական համակարգի հետ լայն և ինտենսիվ համագործակցության շրջանակներում: Այն կարող է իրականացվել սոցիալական և տնտեսական մարտահրավերներին արձագանքելու բնականոն գործընթացի միջոցով: Այդպիսի մոտեցումը հնարավոր կդարձնի առաջնային արձագանքը գլոբալ շուկայի առաջադրած պահանջների նկատմամբ՝ մինչև որ ապահովվի տեղական շուկայի զարգացումն ու կայացումը: Այդ առումով, ՀՀ շրջանավարտների համար առկա և ձևավորվող շուկայի ոլորտների աջակցումն ու բարելավումը ձեռք են բերում կարևոր նշանակություն:

---

[6] Տես՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) ռազմավարական ծրագիր, 2010-2015, անցումային ժամանակաշրջան, 5.6.2010, էջ 11-12

АННОТАЦИЯ

Карен Григорян, *к.э.н., доцент*
АГЭУ

ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПОНЕНТ В СИСТЕМЕ ОЦЕНКИ РАЗВИТИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА И УСТОЙЧИВОГО ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

Анализирован сектор образования в качестве основы устойчивого экономического развития страны и воспроизводства человеческого капитала. Исследованы индекс развития человеческого потенциала, а также три отдельных субиндекса: ожидаемая продолжительность жизни, образование и валовой национальный доход (ВНД). Развитие сектора образования должно быть направлено на повышение качества.

ANNOTATION

Karen Grigoryan, *PhD, Assoc. Prof.*
ASUE

THE EDUCATION COMPONENT IN RA HUMAN DEVELOPMENT AND SUSTAINABLE ECONOMIC DEVELOPMENT EVALUATION SYSTEM

The education sector of RA is highlighted as a basis for sustainable economic development and as maintenance and reproduction of human capital. The human development index, as well as three separate sub-indices: life expectancy, education and gross national income (GNI) were studied. Development of the education sector should be aimed at improving the quality assurance.